ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 424 - Ա **25 ապրիլի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 - Ի N 188 – Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2008 թվականի մարտի 17-ի N 26–Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 188–Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գրիգորյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, նախագահ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար
Զազյան Կարեն	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Օհանյան Հրանդիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ
Մնացականյան Վարդանուշ	- մարզպետարանի աշխատակազմի ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ, քարտուղար
Խաչատրյան Արամ	- մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Գևորգյան Վարդան	- Գեղարքունիքի մարզային թիվ 1 ԲՍՓՀ-ի նախագահ /համաձայնությամբ/
Գինոյան Վարդան	- Գեղարքունիքի մարզային թիվ 2 ԲՍՓՀ-ի նախագահ /համաձայնությամբ/
Սարգսյան Մնացական	- «Արաբկիր» բժշկական համալիր, երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի Գավառի մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/
Հովհաննիսյան Իրինա	- «Աստղացոլք» հաշմանդամ երեխաների ծնողների Հ/Կ, ք.Ճամբարակ /համաձայնությամբ/
Եփրեմյան Մելանյա	- «Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների Հ/Կ, ք.Վարդենիս /համաձայնությամբ/
Համբարձումյան Մարիամ	- «Սոցիալական երկխոսություն» Հ/Կ, ավագ սոցիալական աշխատող, ք. Գավառ /համաձայնությամբ/»:

25.04.2019

Подписано: SARGSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ